ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.05.2024

Սիրելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս այսօր նշվող Աշխատանքի օրվա կապակցությամբ:
Մայիսի 1-ի առիթով շնորհակալություն եմ հայտնում մեր երկրի աշխատող, արարող, կառուցող, թե՛ իր օջախը, թե՛ հայրենիքը շենացնող մարդկանց:
Տոնը միավորում է մեր տարբեր սերունդների ու շատերի համար այն նաև խաղաղության, աշխատող մարդկանց նկատմամբ հարգանքի, համերաշխության, միասնության և համախմբվածության խորհրդանիշ է: Եթե ավագ սերնդի համար Մայիսի 1-ն ասոցացվում է երիտասարդության հիշողությունների ու այլ հասարակարգի գաղափարախոսության հետ, այսօրվա երիտասարդների համար այն պետք է նոր գաղափարներ իրականացնելու ու համարձակ որոշումների խորհրդանիշ դառնա:
Այս օրը նաև միավորում է բոլոր նրանց, ովքեր սիրում են հայրենիքը և իրենց բեղմնավոր աշխատանքով փորձում են այն՝ առավել զարգացած ու պաշտպանված, իսկ մարդկանց կյանքն առավել բարեկեցիկ դարձնել:
Աշխատանքն ու աշխատողը միշտ եղել են ու այսօր էլ են գնահատված, հարգված, օրինակելի, քանզի աշխատանքով է կերտվում ամեն ինչ: Մեզանից յուրաքանչյուրից է կախված, թե ինչպիսին կլինի մեր երկիրը, մարզը, քաղաքն ու գյուղը:
Ցանկանում եմ, որ զբաղվածությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար առաջնային խնդիրներից չլինի, ու բոլորդ կարողանաք ոչ միայն աշխատել, այև զբաղվել սիրելի ու սրտամոտ աշխատանքով:
Բոլորիս խաղաղություն, հաջողություն և բարեկեցություն եմ մաղթում: